կոչ

# ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՈՒԽՏԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ



Սեպտեմբերի 10-11-ին կայացավ Ազգային Միասնության Ուխտի համաժողովը, որն ընտրեց Ուխտի Խորհուրդ (Խորհրդի նախագահ Ռաֆայել Համբարձումյան, փոխնախագահներ՝ Ռուբեն Խաչատրյան, Դնել Մենեֆերիմյան): Համաժողովն ընդունեց հետեւյալ հայտարարությունը.

Ոճրագործների (կլան) հետ սերտաճած Հայաստանի կառավարող խմբակը.

ա. Իր գործունեության առաջին օրվանից մինչեւ այսօր ոտնահարել եւ իրականացնում է հայ ժողովրդին պառակտելու քաղաքականություն:

բ. 1995-96թթ. իշխանությունը ժողովրդից զավթել է ապօրինի գործողություններով եւ ընտրությունների արդյունքները զանգվածաբար կեղծելով, բնակչության վզին է փաթաթել հակաժողովրդական ու ապազգային Սահմանադրություն:

գ. Իրականացրել է ժողովրդի ցեղասպանություն՝ երկիրը դատարկելով բնակչության առնվազն մեկ երրորդից:

դ. Ավելի քան յոթ տարի անարգել կողոպտում է հանրային ու պետական ունեցվածքը, յուրացնում բնակչության համար նախատեսված միջազգային մարդասիրական ու այլ կարգի օգնության, զանազան դրամաշնորհների Հայաստանին տրամադրած գումարների պատկառելի մասը, բազմաթիվ ապօրինություններով, անարդարություններով, կամայականություններով ու այլ գործողություններով նվաստացնում, ընկճում եւ տանջում է բնակչությանը:

ե. Արտաքին քաղաքականության եւ պաշտպանության մարզերում թույլ տված աններելի սխալների պատճառով Արցախի հարցում հայությանը դիվանագիտական ծանր պարտության է մատնել, որի հետեւանքով գերտերությունները ամեն կերպ փորձում են Արցախը բռնակցել Ադրբեջանին:

զ. Իշխանությունը բռնազավթելու, քաղաքական բազմաթիվ դատավարությունների եւ ժողովրդավարությունը ոտնահարող այլ գործողությունների հետեւանքով վարկաբեկված է նաեւ միջազգային ասպարեզներում, որի պատճառով Հայաստանը մեկուսացման մեջ է, հուսալի գործակցի համարում չունի, ինչը մեծապես դժվարացնում, իսկ առանձին դեպքերում անհնարին է դարձնում ծավալելու արդյունավետ ներքին ու հաստատուն արտաքին քաղաքականություն:

է. Այս ամենի համար առաջին հերթին պատասխանատու է ՀՀ գործող նախագահը:

Ներկայումս, ավելի քան երբեւէ, հայությանը համերաշխություն եւ միասնություն է պետք: Սակայն, վերոհիշյալ եւ նման բազմաթիվ այլ պատճառներով ժողովրդի բացարձակ մեծամասնության աչքում հեղինակազրկված ու արհամարհված այդ ղեկավարությունը եթե նույնիսկ ուզենա էլ, հայությանը չի կարող համախմբել որեւէ ազգանպաստ նպատակի շուրջ: Ավելին, նրա իշխանության ամեն մի օրը մեզ բերելու է նորանոր պարտություններ: Հետեւաբար նախագահի եւ Ազգային Ժողովի վաղաժամկետ ընտրություններով օրինական իշխանությունների ձեւավորումը մեր ազատագրական պայքարի հաջողության, երկրի ազգային անվտանգության եւ առաջընթացի գլխավոր պայմանն է:

Ելնելով վերոշարադրյալից, մտավորականությանը եւ կուսակցություններին յորդորում ենք միավորվել հետեւյալ ծրագրի շուրջ.

1. ՀՀ գործող նախագահից պահանջել անհապաղ գրել հեղինակազուրկ ու ոչ արհեստավարժ Ազգային Ժողովը եւ նշանակել նախագահի ու Ազգային Ժողովի արտահերթ ընտրություններ:

2. Ընտրությունների արդարությունն ու օրինականությունը ապահովելու նպատակով նախագահը մտավորականության եւ ազգային կուսակցությունների դաշինքի եւ կառավարող վարչախմբի ներկայացրած հավասար թվով թեկնածուներից կազմում է ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ:

3. Արցախի գլխին կախված վտանգը ազգովին դիմակայելու համար՝ Արցախը հայտարարվում է համահայկական պաշտպանության ամրոց:

Սահմանված ժամկետում նախագահից պատասխան չստանալու դեպքում ազգային կուսակցությունների եւ մտավորականության համատեղ ջանքերով ընտրել Նախախորհրդարան, կազմել Ժամանակավոր կառավարություն, ամբողջ հանրապետությամբ մեկ հանրահավաքներ եւ ժողովներ գումարել՝ իշխանություններին անվստահություն հայտնելու եւ Նախախորհրդարանի կազմած կառավարությանը զորավիգ կանգնելու համար: